Մասնագիտական կրթական ծրագրի ընդհանուր նկարագիր

Ծրագրի անվանումը	101501.06.7 Սպորտային տուրիզմի
Ընդհանուր նկարագրությունը	Մագիստրոսի կրթական ծրագիրը կառուցված է հետևյալ հիմնական կրթամասերից՝ Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ՝ Ընդհանուր և մասնագիտական դասընթացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է մագիստրանտների մասնագիտական խորացված տեսական գիտելիքների և սպորտային տուրիզմի ունակությունների ապահովմանը: Ընդհանուր դասընթացներում ներառված են «Մասնագիտական ներածություն», «Մասնագիտական անգլերեն», Մասնագիտական ռուսերեն», «Տեղեկատվական–տեխնոլոգիաներ» առարկաները, իսկ մասնագիտական կառուցամասում՝ «Արտակարգ իրավիճակները տուրիզմում», «Փրկարարական աշխատանքները տուրիզմում» և «Պատմամշակութային տուրիզմ» առարկաները: Առանձին դեպքերում մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, մասնագիտացված պատրաստման դասընթացների բաղադրիչին հատկացված ժամաքանակի հաշվին հնարավոր է ընդհանուր և մասնագիտական այլ դասընթացների ընդգրկում: Հետազոտական հատված՝ Հետազոտական կրթաբլոկը ներառում է՝ ▪ Գիտահետազոտական աշխատանք. մագիստրոսական թեզի թեմայի շրջանակում կատարվող վերլուծական և հետազոտական աշխատանք է: ▪ Գիտահետազոտական պրակտիկա. գործնական աշխատանք է, որի նպատակն է կրթական ծրագրի ուսանողներին փոխանցել անհրաժեշտ փորձ և հմտություններ մագիստրոսական թեզը հաջողությամբ կատարելու համար: ▪ Մասնագիտական պրակտիկա. նախատեսում է մասնագիտական առարկայի դասավանդում, որի նպատակն է մանկավարժական փորձի ձեռքբերումը և կատարելագործումը: Մագիստրոսական թեզի պաշտպանություն. կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է ներկայացնել ամփոփ հետազոտություն մագիստրոսական աշխատանքի թեմայի շրջանակում:
Ուսումնական պլանը	https://sportedu.am/wp-content/uploads/2024/08/մագ-սպ-տուրիզմ-առկա.pdf
Շնորհվող աստիճանը	Զբոսաշրջության մագիստր
ՈԱՇ մակարդակը	Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակ

Կրեդիտները	60 կրեդիտ
Ուսուցման ձևը	Առկա
Ծրագրի տևողությունը	1 տարի
Դասավանդման լեզուն	Հայերեն
Ուսման վարձը	600 000 ՀՀ դրամ
Վերջնարդյունքը	Մասնագիտական գիտելիք և իմացություն Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Ա 1. Պարզաբանելու սպորտային զբոսաշրջության հիմնական մասնագիտական հասկացությունները, տեսությունները, մոտեցումները. Ա 2. Ներկայացնելու սպորտային տուրիզմի կազմակերպակառավարչական կառուցվածքները, նկարագրել ռիսկերի ծագման դեպքում օպերատիվ կառավարման մեթոդաբանությունը և կառավարման մշակույթի ու հոգեբանության ներկայիս հիմնախնդիրները. Ա 3. Վերլուծելու սպորտային զբոսաշրջության, արկածային և էկոտուրիզմին առնչվող տեղեկատվությունը: Ա 4. Տարբերակելու զբոսաշրջության ուսումնասիրությունների առանձին մոտեցումները, դրանց առանձնահատկությունները/ սոցիոլոգիական, տնտեսագիտական, մշակութաբանական, աշխարհագրական և այլն/: Բ. Մասնագիտական գործնական կարողություններ և հմտություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Բ 1. Գնահատելու զբոսաշրջության ռեսուրսներն ու ենթակառուցվածքները: Բ 2. Կիրառելու PR տեղեկատվական տեխնոլոգիաները սպորտային տուրիզմի առջև դրված նպատակները լուծելու նպատակով: Բ 3. Իրականացնելու հետազոտություններ, վերլուծություններ և հաշվետու լինի՝ օգտագործելով գիտական հետազոտության մեթոդները: Բ 4. Իրականացնելու զբոսաշրջային գործունեության կազմակերպման պլանավորում, նախագծերի կազմում և մոդելավորում: Բ 5. Ներկայացնելու մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկայի և իրավական նորմերը: Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Գ.1. Արդյունավետ օգտվելու մայրենի և օտար լեզուներով տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից: Գ.2. Կիրառելու գիտելիքները պրակտիկայում, ձևակերպելու և լուծելու խնդիրներ:

	Գ.3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերն ու առաջին բուժօգնության և քաղաքացիական պաշտպանության կանոնները: Գ.4. Կատարելու թիմային աշխատանք:
Աշխատաշուկան	• ՀՀ հանրակրթական դպրոցներում, • ՀՀ մարզադպրոցներում, • արհեստագործակցական ուսումնարաններում և քոլեջներում (հիմնական ընդհանուր կրթության հիմքով ծրագրեր իրականացնող), • նախադպրոցական հիմնարկներում, մանկատներում, • արտադասարանական ուսումնադաստիարակչական հիմնարկներում, • հանգստյան տներում, գոտիներում, առողջարարական կազմակերպություններում, • արտադրական ձեռնարկություններում, սպորտային ֆեդերացիաներում, • արկածային տուրիզմի կենտրոններում և ակումբներում, • քաղաքապետարաններում և մարզպետարաններում: